NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

17 հոկտեմբերի 2016 թվականի N ՑԲ-005-10/16

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 132,373,818 ՀԱՏ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (A) ՑՈՒՑԱԿ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ 12,173,914 ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (A) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2016 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 132,373,818 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր տասնութ) հատ սովորական անվանական բաժնետոմսերը Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակ տեղափոխելու և ցուցակման հայտը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 12,173,914 (տասներկու միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր տասնչորս) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակելու և Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 14-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 5-րդ գլխի դրույթներով, 9-րդ գլխի 50 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 132,373,818 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր տասնութ) հատ սովորական անվանական բաժնետոմսերը Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակից տեղափոխել Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակ:
2. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 12,173,914 (տասներկու միլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր տասնչորս) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակել և ընդգրկել Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում՝ միաժամանակ թույլատրելով տեղափոխել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշման առաջին կետն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ երկրորդ կետը՝ 2016 թվականի հոկտեմբերի 20-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մեկ Մարտի 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • info@nasdaqomx.am